ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան	« 30 » հունիսի 2021թ.

ՀՐԱՄԱՆ № 031-Ա

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի № 878-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 30.06.2021թ. գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փորձագետների կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելված №1:

Հ. Հարությունյան

Հավելված № 1
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի
2021 թվականի հունիսի 30-ի № 031-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **վարույթների և իրավական ապահովման բաժնի** փորձագետների կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման՝ վարույթների և իրավական ապահովման բաժնում աշխատանքների ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված, նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետներ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) Բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ.
2) Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա կամ մեկ տարվա՝ մասնագիտական կամ իրավունքի բնագավառի աշխատանքային ստաժ (նախապատվելի է վարչական իրավունքի ոլորտի իրավաբան).
3) Անգլերեն և ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. Հանձնաժողովի վարչությունների հետ համագործակցությամբ իրականացնել հայտարարագրերի վերլուծության համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրումը, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ անձանց ուղղված հարցումները, պահանջվող տեղեկատվության համապատասխանելիության տեսանկյունից ուսումնասիրել ստացած պատասխանները,
2. իրականացնել Հանձնաժողովի գործառույթներից բխող և կառուցվածքային ստորաբաժանումների իրավական աջակցությունը.
3. իրականացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը.

4. Մասնակցել և օժանդակել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների մշակման աշխատանքներին.
5. Մասնակցել և մշակել օրենսդրական նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվող դիտարկումների ու կարծիքների պատասխանները:

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

Փորձագետի աշխատանքը գնահատվում է՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքի:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

1. Իրավական ակտերի նախագծերի մշակում,
2. Իրավական աջակցության իրականացում,
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ, Հանձնաժողովի մտից, ելից փաստաթղթերի հետ կապված իրավական գործընթացների իրականացում: